

հուրդը տալի կամ իւր կարծիքը յայտնել մի որ և է ինքզինի առթիւ այլ ինչպէս և ուրիշ առականութիւնները ուղղում է միայն արձանագրել լոկ փաստը՝ իսկ եղբակացութիւն անել փաստից—թողնում է ընթերցողներին։ Բայց կան առականքի, երբ որ շատ հեշտ է երկու իրար բոլորովին հակասող եղբակացութիւններ անել։ Յիշենք օրինակի համար Նապոլեօնին պատահած դէպքը*։ Կարգաւոր լաֆօնտէնի «Գայլ և Գառն» յայտնի առակը, նա կարծել էր, որ լաֆօնտէնը պաշտպանում է այստեղ հետեւեալ նախադասութեան միտքը, որով սկսում է առակը՝ «La raison du plus fort est toujours la meilleure».

Կամ ինչպէս հայերենումն է՝

« ուժովն քով մշտ տկարն է մողաղ ».

Մինչդեռ այս առակով թէ լաֆօնտէնը և թէ նրա թարգմանիչները ուղացել են միայն արձանագրել մի պատահումն, իրողութիւն, փաստ։ Ուստի առականքի և մասնաւորապէս կալիօլի առականքին հարկաւոր է մեծ զգուշութեամբ վերաբերուել և երեխաներին բերան անել տալիս անհրաժեշտ է ընտրողութիւն անել և բացատրել։

Մինչառ Բերքերեան։



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՆՈՐ—ՆԱԽԻՋԵՒԱՆԻ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԱՆՑԵԱԼԸ.

(Շարունակութիւն).

6.

73 թուականն էր, որ ստացուեցաւ կաթողիկոսական կոնգալը, որով առաջարկուում էր անյապաղ ձեռնարկել դպրանոցի բացման, թէ և դեռ կանոնադրութիւնը ոչ միայն հաստատուած, այլ և հաստատութեան ևս ուղարկուած էր։ Բայց այդ երկու տարուայ մէջ (71—73 թ.) շատ փոփոխութիւն էր եղել Նախիջևանում։ քաղաքում բազմացել էր օտարների թիւը, օտար ազգեցութիւնը ստատկացել էր և հայ հասարակութեան մէջ նոր հոսանք էր մտցրել։ Այլ ևս քաղաքը առաջուանը չէր. նոր հո-

գել նոր նպատակներ էին առաջ եկել հայ ժողովրդի մէջ։ Այն պահանջները, որ նորա առաջ ունէին, տեղի էին տուել նորերին, այն խնդիրները, որ առաջ նոցա համար մահուան և կեանքի դեր էին խաղում, այժմ արդէն կորցրել էին իւրեանց նշանակութիւնը. Նախիջևանը օտուել էր աղգային դործերից և ոտք էր դրել արդէն այն ճանապարհի վերայ, որ պէտք է հասցնէր հայ հասարակութեան և քաղաքային շահերի խտրութեան, Նախիջևանցիք մուսուլման էին տուել դպրոցի խնդիրը և զրադուած էին րեալական դպրոց ընտելու մտքով. Եւ այդ բոլորը արդիւնք էր 72 թուականին Նախիջևանի կեանքում եղած մեծ փոփոխութեան. այդ թընականին փոխուել էր հայկական «Մագիստրատը» և հաստատուել էր նոր քաղաքային վարչութիւնը— «Դուման».

Այսպիսով ահա արգարացել էին երջանկայիշատակ Գէորգ կաթողիկոսի այն կարծիքները, որ ծնել էին նորա մաքում 68 թ. Նախիջևանը այցելելու ժամանակ. Նախիջևանը այն ժամանակ մի տեսակ անցողական դրութեան մէջ էր. արդէն զգացուում էր փոփոխութիւնների մօտենալը. նոր—նոր սկսել էր ժողովրդի ցրուելու նշանները զգալի կերպով երեւել և պարզ աչքով կարելի էր տեսնել Նախիջևանցւոց գլխին ժողովող ամպերը, և էնց այդ էր պատճառը, որ ազգասէր կաթողիկոսը այնպէս շտապեց քաղաքումս ուսումնարաններ բանալ. նա այդ աղգային հաստատութիւններով կամենում էր մի ամուր ամրաբաշխ քաշել, որի հովանու տակ կարողանար խաղաղ կերպով զարգանալ հասարակութիւնը։ Անմոռանալի կաթողիկոսը լաւ գիտէր, որ հայի նամանաւանդ զաղթական հայի յարատեւութեան գլխաւոր պայմաններն են ազգային լեզուն և աղգային եկեղեցին։ Արժանի են խորին ուշադրութեան այն խորհրդածութիւնները, որ անում է այդ մասին կաթողիկոսը իւր դպրանոցի բացման համար արձակած կոնգալներից մէկում։ «Էուսկ ուրեմն մեք, ասում է նա, ուրախազուարճ սրտիւ ախորժեմք լսել և տեսնել զյառաջագիմութիւն սիրեցեալ աղգայնոց մերոց, ուր ուրիք և գտանիցին նոքա տարամիրժեալք ըստ դառնագին արկածից քաղաքական կենաց մերոց ի հայրենի ծոցոյ, և ըստ մերովսանն կարի գործակից և խորհրդատու լինել նոցա վստն ամբելոյ զլուծ պանդխտութեան և ընդ ձեռն դպրոցաց և դպրանոցաց ի լաւ՝ անդր պայման մտաւոր և բարոյական կենաց զնոսին վերածելոյ կարևոր համարիմք . . . և այլն. Այս գէպքում

4. Կոնդակ Գէորգայ Գ-ի տունալ յսմուն քաղաքագլխոյ Նորոյն Նախիջևանի Գէորգայ Եղայանի ի 25 մարտի 1874 ամի։

նա հետևող գտնուեցաւ քաղաքին հիմնադիր Յովսէփ Երկայնարարուէ եպիսկոպոսին, որ զեռ այն ժամանակները, կարծես, զգալով Նախիջևանցւոց ապադային հանդամանքները, կամեցել էր քաղաքումս զարգացնել ազգային կրթութիւնը: Նա, ինչպէս յայտնի է 1787 թ. Պետերբուրգից փոխադրեց Նախիջևան նշանաւոր Զուղայեցի Գրիգոր Խալդարեանցի տպարանը և սկսաւ Հայոց գրքեր տպել, բայց զժողովաբար այդ գործը յարատեւութիւն չունեցաւ: Տպարանը մնաց Նախիջևանում մինչև 1793 թ. և փոխադրուեցաւ Հաշտարխան, որովհետեւ գլխաւորապէս նոցա փողով էր գնուած:

Նախիջևանցիք, ինչպէս ասացինք, արդէն մոռացել էին դպրանոցի խնդիրը. բայց և այնպէս պէտք էր մի տեսակ ընթացք տալ կոնդակին, անպատասխան թողնել չէր կարելի. կազմուեցաւ յանձնաժողով կոնդակի առաջարկութիւնը քննելու և իրագործելու համար. Յանձնաժողովի քաղաքային խորհրդարանին ներկայացրած զեկուցագրի հիման վերայ վճռուեցաւ առ ժամանակ խնդրել կաթողիկոսից բանալ միայն դպրանոցի չորս դասարանը, որովհետեւ վեհափառի առաջարկած միջոցները բաւական չէին դպրանոց սրահելու: Նամանաւանդ որ Խալիլի ժառանգ հանգուցեալ Գէորգ Խոջայեանըն էլ, որ այդ ժամանակ քաղաքագլուխ էր, հրաժարուեցաւ տալ Խալիլի և իւր խոստացած 6000 ռուբլին, պատճառ բերելով, որ իւր և իւր զանազան խնդիրները: Բացի սորանից, քաղաքային խորհրդարանը նոյն յանձնաժողովի զեկուցագրի հիման վերայ խնդրեց կաթողիկոսից, որ բացուելիք հոգեւոր դպրոցի կառավարութիւնը, ըստ ամենայն մասանց, յանձնուի խորհրդարանից ընտրուած և կաթողիկոսից հաստատուած հոգաբարձութեան, որի անփոփոխ անդամ պէտք է համարուէին քաղաքի և եկեղեցիների երէցփոխանները և քաղաքագլուխը, և իրաւունք տրուի իւրեանց միջից մէկին պատուամեծար հոգաբարձու ընտրելու դպրոցին: Խնդրեցին նոյնպէս, որ եթէ նորին Վեհափառութեան հաճոյ կլինի վերադնել ապամաններով բանալ զըպրոցը, առաջին տեսուչ նշանակէ Գրիգոր եպիսկոպոս Եզգափրեանին, Երջանկայիշատակ կաթողիկոսի կոնդակի մէջ մեր ուշադրութիւնը գրաւում են նա մանաւանդ նորա մի քանի կէտերը, Նախ, որ կաթողիկոսը իւր առաջարկութեամբ զիմում է Վստուածասէր և ազգասէր հասարակութեան նորոյն Նախիջևանայ քաղաքին: Արդ, ո՞վ պէտք է ստանար և գործադրէր այդ կոնդակը, ո՞վ էր այդ ժամանակ համարուում Նախիջևանցւոց ներկայացուցիչը, Անկասկած կաթողիկոսը ասելով. Վստուածասէր և ազգասէր հասարակութիւն նորոյն Նախիջևանայ

քաղաքին: Ի նկատի ունէր քաղաքային խորհրդարանը. ինչպէս առաջ այդպիսի դէպքերում միշտ ի նկատի էին ունենում քաղաքագլխին և նորա նախագահութեամբ կազմուող հասարակաց ժողովը կամ Մագիստրատը, Բայց խնդիրն էլ հէնց այդ է, որ Մագիստրատը իրրեւ տէրութեան առանձնաշնորհումով միայն Նախիջևանի հայերին տրուած մի հաստատութիւն, ճիշդ որ ներկայացնում էր Նախիջևանի հայ հասարակութիւնը. նորանով էր հիմնարկուել Նախիջևան քաղաքը, նորա հիման վերայ էր կազմակերպուել Նախիջևանցւոց կեանքը: Մագիստրատը, բացի հայ հասարակութիւնից, Նախիջևանում ուրիշ հասարակութիւն չէր ճանաչում: Նա մի բուն հայկական հաստատութիւն էր, Իսկ Գ. Բ. որ 72 թ. բանել էր առաջուայ քաղաքային կառավարութեան տեղը, ընդհանուր քաղաքային հաստատութիւն էր. նա ներկայացուցիչ էր ոչ միայն հայ հասարակութեան, այլ և Նախիջևանի օտար հասարակութիւններին, Քաղաք. խորհրդ. հիմնուելով վերջացել էր Նախիջևանի տէրութիւնից շնորհած արտօնութիւնը և քաղաքը իւր իրաւունքներով հաւասարուել էր տէրութեան միւս քաղաքներին: Յայտնի բան է. կաթողիկոսը զիտէր այդ նոր փոփոխութեան մասին, բայց ի նկատ առնելով, որ քաղաքի ամենամեծ հասարակութիւնը զեռ հայոցն է, իսկ օտարների թիւը շատ սակաւ է, ի նկատի ունելով, որ բոլոր քաղաքային խորհրդարանը իւր քաղաքագլխով ու վարչութեամբ զեռ ամբողջովին հայերից է բաղկացած և առ հասարակ բոլոր քաղաքային կառավարութիւնը հայերի ձեռքին է գտնուում և վերջապէս, նա մանաւանդ, որ շատ զուտ հայ հասարակութեան պատկանած գումարներ զեռ խորհրդարանի տնօրինութեան տակ են գտնուում և այսպիսով ազգայինը զեռ բոլորովին զատուած չէ ընդհանուրից, նորան է դիմում իւր առաջարկութեամբ, նորան է ճանաչում հայ հասարակութեան ներկայացուցիչ, Քաղաքային խորհրդարանը ևս ընդունելով և իւր քննութեան առարկայ անելով Վեհափառի առաջարկութիւնը, որ յայտնի բան է, վերաբերում էր միայն հայ հասարակութեան, գորանով արդէն հաստատում է իւր դէպի հայ հասարակութիւնը ունեցած առանձին յարաբերութիւնը, Երկրորդ կէտը, որ գրաւում է կոնդակի մէջ մեր ուշադրութիւնը, հիմնուելիք դպրոցի նպատակի առանձին որոշումն է: Թեմական հոգեւոր դպրանոց կամ Ռեփուէլ ասելով, ինչպէս յայտնի է, Ռուսաստանում հասկացուում է մի դպրոց, որի առաջին և գլխաւոր նպատակն է կրթուած հոգեւորականներ պատրաստել, բայց հանգուցեալ կաթողիկոսը Նախիջևանի թեմական դպրանոցի համար աւելացնում է

մի երկրորդ նպատակ՝ պիտանի քաղաքացիներ պատ-
րաստեւել քաղաքի և տէրութեան համար. դպրանոցում
աւարտողներից միայն ցանկացողները պէտք է հո-
գեւորական դառնան, իսկ միւսները կարող են մանեւ
կամ տէրութեան և կամ Եւրոպայի բարձրագոյն
դպրոցները. «Եւրոբոս», «Բոս» է նա իւր հանդիման-
դարացի ան հանձնեցող է դատարանականիւն պատանեաց
հայաց ցանկացողաց նախել զանիւն էւրեանց է սպասա-
բոնիւն Հայաստանեայց եկեղեցւոյ է վարդապետութիւն և
է Բանաստեղծութիւն, Բայց և անպէս աշակերտք նորին ոչ
պարտաւորեցիւն տնեւեւեան անպարճաւ և անխորիւր միտ-
նել է իւրանն եկեղեցւոյն վեճակէլ, այլ յաւորոս առմանցն
է նախէ՝ իւրեւ ըստ որդեւանց ուսմանց իւրեւանց միտնել և
յոր և ինչ պատշաճ Բանաստեղծութիւն համ զանիւնց ուսմանցն
շարունակել է Բանաստեղծութիւն վարժարանս Բանաստեղծութեան միտն
համ իւրեւանց:

Նշանաւոր է կոնդակի և այն կէտը, որ վերաբերում է Խալիքեան դպրոցին։ Ինչպէս յայտնի է Նախիջևանի «Խալիքեան և Հայրապետեան» կողմէն բերկապառհովութիւնների պատճառներից մէկը է Խալիքեան դպրոցն էր, որ Այվազեանը և Խալիքեանը, փոխանակ բաղամաշայ Նախիջևանում շինելու, Թէոդոսիայումն էին շինել, Հակառակ կողմակցութիւնը պնդում էր, թէ թեմի արգիւնքով պահուող և Նախիջևանի եկեղեցական գումարներով շինուած դպրոցը, նախ, պէտք է թեմին ծառայէ և, երկրորդ, պէտք է գտնուի Նախիջևանում, իբրեւ թեմի ամենաբաղամաշայ կենտրոնում։ Իսկ Խալիքը և Այվազեանը հերքում էին ժողովրդի իրաւունքը խառնուելու այդ գործի մէջ, իւրեանց սեփականելով դպրոց հաստատելու թէ՛ նւթական և թէ՛ բարոյական պատիւը։ Ահա կոնդակի վերոյիշեալ կէտը հաստատում է ժողովրդի իրաւունքը, ընդունելով, որ դպրոցը շինուած է եղել թեմի և Նախիջևանի գումարներով և Խալիքի միայն մասնաւոր ուսանողութեամբ։ Բացի Նա (Դպրոցը) հիմնաւ զորով յայն 1858 է թեոդոսիոս քաղաքէ իւրեան էլ ինչպէս քաղաքէ մէջնէն Նախիջևանի և Բեհագրաբէյոյ քաղաքէն նոյն տեղանքին աւարտելուն լոյ է տրուել։ Յարգելի է Սարգիսեան ուսուցիչ իւրեանց լոյսէն։ Խալիքեան դպրոցի թեմական գումարներով շինուած լինելը հաստատում են և այն պատճառաբանութիւնները, որոնց հիման վերայ Նախիջևանի հասարակութիւնը խնդրում էր կաթուղիկոսից տեղափոխել դպրանոցը Նախիջևան, և, ինքնապէս, տեղութեան այն որոշումն, որով դրա

բոցը փակուեցաւ և շէնքը իւր բոլոր պարագաներով յանձնուեցաւ հոգևոր տեսչութեան: Յանձնաժողովի ղեկուցագիրը՝ որի հիման վերայ քաղաքային խորհրդարանը կայացրեց իւր վերոյիշեալ վճիռը: պարունակումէ իւր մէջ մի քանի շատ հետաքրքրական դիտողութիւն: որ կարելի է գտնել այդ յանձնաժողովի ղեկուցագրի մէջ:

Յանձնաժողովի ղեկուցադրի այս կետերից կա-
րելի է տեսնել, որ թէև քաղաքային խորհրդարա-
նը այդ ժամանակ զբաղուած էր բեալական դպրոցի
բացման խնդրով, բայց շատ օգտաւէտ և ցանկալի
էր համարում և հայկական դպրանոց ունենալ, Սա-
կայն դժբաղդաբար այդ բոլոր ցանկութիւնները
պղատոնական էին միայն, որովհետև Յանձնաժողո-
վը իւր կողմից համարեա՞ ոչ մի նպաստ ցոյց չը-
տուեց կաթուղիկոսի բարի առաջարկութիւնը լիո-
վին իրագործելու, եթէ, յայտնի բան է, չհամա-
րենք այն 700 ուրբլին, որ նա նշանակել էր իրրե-
տան վարձ բացուելիք դպրանոցի համար, նա բաւա-
կանացաւ միայն Վեհափառի ցոյց տուած եկամտի
աղբիւրները քննելով և եկաւ այն եղբակացու-
թեան, որ յիշած աղբիւրները բաւական չեն մի
լիակատար 8 դասարանեան ժառանգաւորաց դպրա-
նոց պահելու համար:

Վաթուղիկոսը գիմելով հայ հասարակութեան
իւր կոնգակով՝ անկասկած ինքն էլ գիտեր իւր առա-
ջարկած նիւթական միջոցների անբաւարարութիւ-
նը, որովհետև ձեռքի տակ ունէր, ինչպէս վե-
րեւ յիշեցինք, Այվազեանի երկու նախագիծը,
բայց նա յոյս ունէր, որ պակասը կը լրացնէ հասա-
րակութիւնը, քանի որ այդ հասարակութեան ցան-
կութեամբ և նորա խոստացած դրամական նպատի
հիման վերայ էր դպրանոցը բացուում՝ Նախիջև-
նում։ Զարմանալին այն է, որ յանձնաժողովը յի-
շելով հասարակութեան 71 թուականի համախօսա-
կանով խոստացած պայմաններից մէկը՝ բացուելիք
դպրոցի համար հրապարակի երկրարկանի շէնքը
յատկացնելու, աչքից թողնում է վեց հազար նը-
պաստ տալու գլխաւոր պայմանը, թէև թէ՛ առաջ-
նի և թէ՛ երկրորդի վերայ որոշակի կերպով մատ-
նացոյց է արած կոնդակի մէջ, Սարեւի է Յանձնա-
ժողովը չէ յիշում այդ վեց հազարի մասին, որով-
հետև 71 թուականի համախօսականը պայմանով էր
միայն խոստացել այդ վեց հազարը տալու՝ «ի դեպ»
պայմանով են խոստում, ինչպէս որ ասում է Պրոգնոզը»,
բայց ամէն մի հայ դպրոցների կեանքին ծանօթ
մարդ կը հասկանայ, որ այդ պայմանը առերես էր, ո-
րովհետև ամէնքն էլ լաւ գիտէին, որ ոչ մի հայ
դպրոց միայն իւր թոշակատու աշակերտների եկամ-
տով չէ կարող կառավարուել։ Նոցա աչքի առաջ էր

27. Պատմություն Խալիբեան ուսումնարանիս ազգիս Հայոց, շարագրեալ է Գաբրիէլ արքեպիսկոպոսէ Ալվազեան. էջ (275—275):

Խալիբեան դպրոցը, որի վերայ թէև ծախսուում էր ամբողջ թեմի արդիւնքը, բայց նա զարձեալ թռչակատու աշակերտների թուի պակասելու պատճառով փակուեցաւ:

(Իւր շարունակութիւնը):

Ե. Ծ.



ԱՐՄՈՒԻ ԲՈՅՆԸ.

ԶՐՈՅՑ ԲԻՕՐՆՍՏԻԵՐՆԷ—ԲԻՕՐՆՍՏՈՆԷ:

Լնդերէզաարդէն կոչուում էր միւս գիւղերից հեռու ընկած և բարձր սարերով շրջապատուած մի գիւղը, նա շինուած էր հարթ հաւասար և պողաբեր հովտում, որ սարից վաղող գետով երկու մասի էր բաժանուած: Այդ գետը թափուում էր մի ուրիշ մեծ գետի մէջ, որ գտնուում էր գիւղի մօտ և մի քանի մղոն տարածութեան վրայ երևում էր այդ տեղից:

Այդ գետի հոսանքովն ի վեր երբեմն նաւակով մի մարդ բարձրացաւ, որ առաջին անգամն էր գալիս այդ հովիտը—նորա անունն էր Էնդրէ, և հիմայ այս տեղ ապրում էին նորա սերունդները: Մի քանիսն ասում էին թէ նա եկել էր այստեղ, որ իւր գործած մարդասպանութեան հետևանքից փախչելով ազատուի, դորա համար էլ նորա սերունդը այդպէս մնայլ էր: Միւսները հաստատում էին, որ այդ մնայլութեան պատճառը բարձր ժայռերն են, որոնք Հոգեգալստին էլ չէին թողնում, որ արևի ճառագայթները, կէսօրուայ հինգ ժամից յետոյ, անցնեն հովիտը:

Գիւղի վրայ կախուած էր մի արծուի բոյն, նա կպած էր սարերի միջից բարձրացող մի ժայռից, բոլորն էլ տեսնում էին, թէ ինչպէս էդ արծիւը թուխս էր նստում, բայց ոչ ոք չէր կարողանում մօտենալ նորան: Իսկ որձը պտտուում էր գիւղի վրայ, արագ իջնում էր ցած և կամ գառն կամ ուշ էր թռչնում: Միանգամ էլ մի երեխայ վերցրեց և տարաւ: Ինքա համար էլ ոչ ոք իրան հանգիստ չէր զգում, քանի որ արծիւը մնում էր հաստատ ժայռի ծայրին գտնուող բոյնի մէջ, Թողովորդի մէջ աւանգուածին կար, որ երբեմն, շատ վաղուց, այստեղ երկու եղբայրներ էին ապրում, որոնք բարձրացան վերև և քանդեցին բոյնը: Բայց հիմայ ոչ ոք չէր կարողանում նորան մօտենալ:

Բաւական էր, որ երկու մարդ Էնդրէզաարդէնում իրար հանդիպէին և ահա նոքա իսկոյն սկսում էին արծուի բոյնի մասին խօսել և վերև նայել: Գիւղի բոլոր բնակիչները գիտէին, թէ երբ են ար-

ծիւները վերագառնում, որտեղ են իջնում և որ տեղ վնաս տալիս, և ո՞վ էր վերև բարձրանալու վերջին փորձ անողը: Երիտասարդները մանկութիւնից վարժուում էին սարերի և ժայռերի վրայ բարձրանալ, ամրացնում էին իրանց ոտները և ձեռները, որ երբ և իցէ այն երկու եղբայրների նման բարձրանան ժայռի ծայրը և բոյնը ոչնչացնեն:

Այն ժամանակ, որի մասին մենք խօսում ենք, ամենալաւ պատանին կոչուում էր Լէյֆ և Էնդրէի սերնդին չէր պատկանում: Նա գանգուր մազեր և փոքր աչքեր ունէր, շատ ուրախ մարդ էր և կանանց շատ էր սիրում: Դեռ մանկութիւնից նա հաւատացնում էր, որ անպատճառ մի ժամանակ կը քանդէ արծուի բոյնը, բայց ծերերը պատասխանում էին, որ այդպիսի բաների վրայ պէտք չէ բարձր խօսել:

Այդ աւելի էր գրգռում նորան և ահա մի անգամ, երբ նա զարգացել ու զօրացել էր, նա վճռեց կատարել իւր որոշումը: Ամառուայ սկզբի մի պայծառ կիւրակէ առաւօտ էր, արծուաձագերը նոր էին ձուից դուրս եկել, Թողովորդը մեծ բազմութեամբ հաւաքուել էր ժայռերի տակ՝ նայելու: Ծերերը խորհուրդ էին տալիս Լէյֆին հրաժարուել իւր մտադրութիւնից, երիտասարդներն ընդհակառակը դրդում էին նորան: Սակայն նա իրանը արեց, առանց մէկին լսելու: Սպասեց մինչև արծուամայրը բոյնից դուրս թռաւ, յետոյ նա մեծ թռիչք արեց դէպի վեր և ծառի ճիւղերից բռնեց: Այդ ծառը բուսած էր ժայռի ճեղքումքի մէջ և այդ ճեղքով նա սկսեց բարձրանալ դէպի վեր: Փոքրիկ քարերը պոկուում էին նորա ոտների տակ, հողի կտորները թափուում, ընկնում էին ներքև: Գորանից զատ չուրջը ոչինչ չէր լսուում միայն գետի կամացուկ խշշոցն էր, որ սարից իջնում էր հովիտը, ժայռը աւելի ու աւելի զառկայր էր դառնում: Լէյֆը ըստիպուած էր լինում մի ձեռով երկար ժամանակ կախ ընկած մնալու, ոտով որոնելով ամուր հողը, որ նորա աչքերը չէին կարող տեսնել: Շատերը, մանաւանդ կանայք, երեսները յետ դարձրին, ասելով, որ նա երբէք այդ չէր անիլ, եթէ նորա ծընողները կենդանի լինէին: Վերջապէս նա գտաւ մի յենակէտ և նորից սկսեց որոնել մերթ ձեռով, մերթ ոտով, թէ որտեղից կարող էր բարձրանալ, ամուր բռնեց ժայռից, ծածուկ կանգնածները լքուում էին միմեանց ծանր շնչառութիւնը: Այդ բոլոր պէին վերկացաւ մի երիտասարդ աղջիկ, որ նստած էր միւսներից հեռու, քարի վրայ, ասում էին, որ նա մանկութիւնից խօսք էր տուել Լէյֆին, թէ և վերջինս Էնդրէի սերնդին չէր պատկանում: Ձեռ-